Գրոյիտարներ բոլոր յերկրների, միացե՛ք.

ՊՐԱԿ № 3

ԿԱՆՈՆՆԵՐ

ՓՈՂՈՑԱՅԻՆ ՇԱՐԺՄԱՆ ՄԱՍԻՆ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ՅԵՐԵՎԱՆ 1933

CA 314
656
4-21
26 SEP 2010

Գրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք.

ԳՐԱԿ № 3

ԿԱՆՈՆՆԵՐ

ՓՈՂՈՑԱՅԻՆ ՇԱՐԺՄԱՆ ՄԱՍԻՆ

Библиотека
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ՅԵՐԵՎԱՆ 1933

MAY 2013
24.118

Գեհրատի տպարան
Գլավլիտ № 9110
Գատվեր № 3616
Տիրաժ 2000

ՊԵՏ. ԿԱՌ. ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ZUUՈ-Арм ССР
Ս. ԱՌ. Ա. Մյասնիկյանի անվան
56855-66

I. ՀԱՏՎԱԾ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Հետիոտներն (վոտով լեբթևեկողները) ու տրանսպորտային միջոցների վարողները պարտավոր են լենթարկվել շարժման համար սահմանված ազդանշաններին, նշանակներին և ցուցանիշներին.

2. Շարժման նշանակներն ու ցուցանիշները դրվում են համապատասխան տեղերում՝ բացառապես Բ. Գ. Միլիցիայի թույլտվությամբ։

3. Փողոցային շարժումը կարգավորում է—

ա. Միլիցիոների ձեռքի բարձրացումով.

բ. Լույսի մեխանիկական ազդանշանով.

գ. Լուսարձակով.

դ. Հատուկ նշանակներով և ցուցանիշներով։

4. Միլիցիոներն ազդանշաններ է տալիս։

ա. «Կանգ առ» բ. «Կողքնքաց թույլտվություն»

Միլիցիոնների այդ ազդանշանները նշանակում են։

ա. «Կանգ առ» ազդանշանը—բարձրացած է ձախ ձեռքը։ Այս ազդանշանին՝ միլիցիոների թիկունքում շարժվող տրանսպորտը պարտավոր է կանգ առնել առանց անցնելու խաչաձևման սահմանը։ Այս ազդանշանին՝ խաչաձևման կետը հասած տրանսպորտը պետք է ազատի այդ տեղը։

բ. «Կողընթաց թույլտվություն» ազդանշանը տրվում է միլիցիոների աջ ձեռքի շարժումով կրծքի ուղղությամբ։

Այս ազդանշանին՝ ըստ լայնության կտրող փողոցի տրանսպորտը սկսում է շարժվել։ Միլիցիոներն այս ազդանշանը տալիս է պրոֆիլով կանգնած դեպի կողընթաց շարժումը։

5. Լուսարձակի ազդանշանները նշանակում են.

ա. Կանաչ լույսը—ճանապարհն ազատ է.

բ. Կարմիր լույսը—տրանսպորտի ու հետիոտների համար ճանապարհը փակ է։

գ. Դեղին լույսը—ուշադրություն։

Տրանսպորտն ու հետիոտները, վորոնք, տեսնելով դեղին լույսը, դեռ չեն հասել խաչաձևման սահմանին, պարտավոր են կանգ առնել, իսկ հասածները, շարունակելով իրենց ճանապարհը, պարտավոր են անհապաղ ազատել խաչաձևման կետը։

Դեղին լույսի տևողությունը թույլատրվում է հինգ վայրկյանից վոչ պակաս։

6. Շարժումը կատարվում է աջ կողմով։ Վորոշ փողոցներով շարժումը կարող է սահմանվել միայն մեկ ուղղությամբ։

7. Արգելվում է տրանսպորտի շարժումը հետիոտների համար հատկացված ուղիներով, մայթերով, զբոսավայրերով և, առհասարակ, հետիոտ շարժման համար սահմանված տեղերով։

8. Տրանսպորտի շարժումը զբոսայգիների, ծառուղիներով ու հրապարակներով թույլատրելի է միայն այն դեպքերում, երբ չկան արգելիչ ցուցանիշներ։

9. Տրանսպորտավարն ընդհարվելու կամ իրար վրա կիտվելու վտանգը պարտավոր է կանխել ժամանակին՝ ազդանշանով, նշանով կամ կանչով։

Ազդանշանը տրվելու է—

ա. Դարպասներից դուրս գալիս և ներս մտնելիս։

բ. Շրջադարձերում.

գ. Առաջացման ժամանակ.

դ. Ընթացքը դանդաղեցնելիս.

ե. Անսպասելի կանգառումներին.

զ. Խաչաձևման վայրին մոտենալիս.

ը. Բոլոր դեպքերում, երբ ճանապարհին վորևե արգելք կա։

10. Բոլոր տեսակ տրանսպորտային միջոցների յել և մուտը դարպասներով կատարվելու յե ամենադանդաղ ընթացքով։

11. Բոլոր դեպքերում, երբ հետիոտը դուրս չի գալիս ճանապարհից, տրանսպորտավարը պետք է դանդաղեցնի կառքի ընթացքը և անհրաժեշտ դեպքում բոլորովին կանգնեցնի։

12. Գլխավոր փողոցների վրա նրբափողոցներից, անցքերից ու դարպասներից դուրս գալիս՝ տրանսպորտավարները նախապես պիտի կանգ առնեն անկյուններում և ապա ընթանան յերբ ճանապարհն ազատ է։

13. Շարժումը վերսկսելիս՝ տրանսպորտավարները պարտավոր են ազդանշան տալ։

14. Առջևը գնացող տրանսպորտից առաջ անցնել թույլատրվում է բացառապես ձախ կողմով և առանց ուժեղացնելու սահմանված արագությունը։ Տրամվայի վագոններից առաջ կարելի յե անցնել աջ կողմով։

Առաջ անցնող տրանսպորտը չպետք է խանգարի յետամնաց տրանսպորտի շարժումը։

15. Խիստ արգելվում է առաջ անցնել ամեն տեսակ տրանսպորտից. տրամվայի ու ավտոբուսների կանգառման կետերում, խաչաձևման ու

շրջադարձման տեղերում, նեղ անցքերում և այնտեղ, ուր ճանապարհը լավ տեսանելի չի, նաև յերբ առջևը գնացողների կողմից նախազգուշացնող ազդանշան է տրվում։

16. Ուղղությունը փոխելու շրջադարձ թույլատրվում է կատարել բացառապես խաչաձևման կետերում։

17. Ուղղությունը փոխելու անհրաժեշտ դեպքում շրջադարձը կատարվում է.

ա. Աջ շրջադարձ — ազդանշան տալ ձեռքով, մոտենալ մայթին և շրջել փողոցի անկյուններում ըստ կարելույն խիստ կոր գծով։ Շրջադարձը թույլատրելի յե կանաչ ու կարմիր լույսերի ժամանակ։ Վորոշ դեպքերում շրջադարձը կարող է չթույլատրվել կարմիր լույսի ժամանակ, բայց այս դեպքում դա նախազգուշացվում է համապատասխան ազդանշաններով։

բ. Ձախ շրջադարձ — ձեռքով ազդանշան տալ, կանաչ լույսով դուրս գալ փողոցի մեջ անդրն ու կանգ առնել, ձախ շրջելով առջևի անիվները։ Դեղին լույսն յերևալիս՝ շրջադարձ անել ըստ կարելույն խիստ կոր գծով։

Լուսարձակի գործողության միջոցին շրջադարձները կատարվում են նույն կանոններով։

18. Արգելվում է շրջադարձ կատարել մի անգամից միևնույն շարքում իրար քով գնացող

յերկու տրանսպորտներին· ազ շրջադարձին առաջնությունը տրվում է աջակողմյան տրանսպորտին, իսկ ձախ շրջադարձում—ձախակողմյանին։

19. Խաչաձևումներում շրջադարձ կատարելիս՝ արգելվում է անկյունները կտրել կամ քաղաքային յերկաթուղագծի (տրամվայի) սլաքներով ընթանալ։

20. Փողոցների խաչաձևումներում յերթի առաջնության իրավունքը պատկանում է ռելսային ուղիներով շարժվող տրանսպորտին (տրամվային), իսկ մնացած դեպքերում աջից շարժվող տրանսպորտին։

Սայլուղային տրանսպորտը զիջում է ճանապարհը ավտոտրանսպորտին և մոտոցիկլետին։

Շտապ բժշկական կամ շտապ տեխնիկական ոգնության ավտոմեքենաները, միլիցիական ու հրշեջ մեքենաները, բանտարկյալների խմբերը, զինվորական մասերն և կազմակերպված յերթերն անցնում են հերթից դուրս։

21. Տրամվայների կանգառման կետերում, ուր չկա «կանգ առ» ազդանշանը, անռելս տրանսպորտի շարժումը կարող է շարունակվել առանց կանգի, բայց մի ժամում 10 կիլոմետրից վոչ ավելի արագությամբ, ձեռք առնելով բոլոր

նախազգուշական միջոցները, մինչև իսկ բոլորովին կանգնեցնելով կառքը։

22. Տրամվայի կանգառման կետերում, վագոնի կանգնած ժամանակ, բոլոր տեսակի տրանսպորտները կանգ են առնում վագոնից մեկ մետր հեռավորությամբ և շարունակում են իրենց ճանապարհը՝ վագոնը շարժվելուց հետո միայն։

Յեթե խորտակումների կամ անհրաժեշտ վորևե շտկումների հետևանքով՝ տրամվայը յերկարատև է կանգնում, ապա տրանսպորտային միջոցների շարժումը վերսկսվում է տրամվայի ուղևորների յելքն ու մուտքը վերջանալուց հետո։

23. Հրշեջ մեքենաները, միլիցիական, շտապ բժշկական և շտապ տեխնիկական ոգնությունների ավտոմեքենաներն անցնում են տրամվայի կանգառման կետերը դանդաղեցրած ընթացքով, իրենց մոտենալու մասին նախազգուշացնելով սահմանված հատուկ ազդանշանով։

Հիշյալ ավտոմեքենաներին թույլատրվում է ոգտվել հատուկ ազդանշանով բացառապես ոպերատիվ գործողություններ կատարելու հետ կապ ունեցող շարժման ժամանակ։

24. Փողոցներում կանգ առնելիս՝ տրանսպորտավարները պարտավոր են իրենց կառքերը կանգնեցնել շարժման ուղղությամբ մայթի

յերկայնքով, 30 սմ. վոչ հեռու նրանից, առանց խափանելու տների մուտքը, դարպասները, ավտոբուսների ու տրամվայների կանգառումները։

Միլիցիայի ազդանշանով կամ վորևե խաչմերուկի հետևանքով փողոցում կանգառնելիս՝ տրանսպորտավարները պիտի կանգնեցնեն իրենց կառքերն այնպես, վոր չխանգարվի փողոցի լայնությամբ հետիոտների անցնելը։

Կառքերն ու տրամվայի վագոնները փողոցի խաչաձևումներում միլիցիայի ազդանշանով կանգառնելիս՝ կանգնելու յեն, դուրս չգալով տների ճակատի գծից։

25. Ցերբ անհրաժեշտ է կառքը յետ շարժել, նրա վարողը պարտավոր է նախապես ստուգել, թե արդյոք իր հետևում ճանապարհն ազատ է տալով համապատասխան ազդանշան։ Ցետընթաց շարժումը կարելի չէ կատարել 15 մետրից վոչ ավելի։

26. Ամեն տեսակ տրանսպորտի վարողները պարտավոր են իրենց կառքը տրամադրել միլիցիական պաշտոնյաներին՝ ըստ նրանց պահանջի հետևյալ դեպքերում.

ա. Թագնվող հանցագործներին հետապնդելու.

բ. Համապատասխան բուժհիմնարկները հասցնելու շտապ բուժոգնության կարոտ անձերին.

գ. Թորտակումների վայրը մեկնելու։

Դիակներ տեղափոխել կարելի է բացառապես բեռնատար տրանսպորտով։

II. ՀԱՏՎԱԾ

ՏՐԱՆՍՊՈՐՏԱՎԱՐՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՑԵՎ ՆՐԱՆՑ ԱՌԱՋԱԴՐՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

27. Ամեն տեսակի տրանսպորտի վարողները պարտավոր են.

ա. Անկախ վորակավորումից, քաղաքում յերթևեկելու իրավունք ստանալու համար տվյալ քաղաքի Բ. Գ. Միլիցիայի հատուկ հանձնաժողովի առաջ փորձնական քննություն տալ.

բ. Լավ իմանալ քաղաքի փողոցային շարժման վերաբերյալ բոլոր կանոնները.

գ. Բ. Գ. Միլիցիայի վարչության հաշվառքում լինել.

դ. Միշտ մոտն ունենալ տրանսպորտ վարելու թույլատվությունն և այն ներկայացնել Բ. Գ. Միլիցիայի պաշտոնատար անձերին ըստ առաջին պահանջի.

յե. Դժբախտ պատահարների դեպքում իսկույն կանգ առնել և տուժածներին առաջին

ոգնություն հասցնել, դեպքի մասին հայտնելով պահակ միլիցիոներին կամ Բ. Գ. Միլիցիայի մարմիններին։

28. Ամեն տեսակ տրանսպորտի վարողներին արգելվում է.

ա. Վարել տրանսպորտը հարբած վիճակում.

բ. Տրանսպորտի վարելը հանձնել պատշաճ իրավունք չունեցող այլ անձերին։

գ. Համարների նշաններն ուրիշին տալ։

դ. Վարելու իրավունքի վկայականները վաբևե ուրիշին հանձնել։

ՄԵՔԵՆԱԿԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏ

29. Մեքենական տրանսպորտ վարելը թույլատրվում է.

ա. Վարելու իրավունք ունեցողներին։

բ. Բ. Գ. Միլիցիայի մարմիններից համապատասխան վկայագիր ունեցողներին։

գ. 18-ից վոչ պակաս տարիքավորներին, իսկ հանրային նշանակություն ունեցող տրանսպորտը (տրամվայ, ավտոբուս) վարելու համար 20-ից վոչ պակաս տարիքավորներին։

30. Քաղաքում յերթևեկել թույլատրվում է բացառապես այն կառքերին, վորոնք ստուգված են և պիտանի յեն ճանաչված տեխնիկական հանձնաժողովի կողմից։

31. Արգելվում է յերթևեկել մեքենական տրանսպորտին հետևյալ դեպքերում.

ա. Արգելակը սարքին չի։

բ. Լյուցեռնի ղեկի $^{1}/_{10}$ պտույտից ավելի։

գ. Խլացուցիչ չունի, խլացուցիչը բաց է և շարժման միջոցին ծուխ է տալիս։

դ. Բադիատորը կաթում է։

յե. Անիվներում լյուֆտ ունի։

զ. Թեվեր չունի։

ը. Կառքը ներկված է կարմիր գույնով.

թ. Բոլոր անիվների վրա մետաղե ցցվածքներ կան։

ժ. Շարժման մեջ է դրվում պրոպելլերով։

ի. Առջևը կամ յետևը լապտերներ չունի։

լ. Ազդանշանի սարքավորում չունի։

խ. Բացակայում են 2 անկախ արգելակները։

ծ. Շինները թուլացած կամ պատռված են։

կ. Կառքը կեղտոտ է կամ փոշը (կուզով) հանված է։

հ. Զորս արգելակ ունեցող ավտոմոբիլները, վորոնք չունեն «կանգ առ» ազդանշան և հավասարակող յեռանկյունու ձևով հատուկ նշան.

ձ. Բացակայում են արգելակները։

32. Մեքենական տրանսպորտի յուրաքանչյուր վարողն աշխատանքի դուրս գալիս՝ ունե-

նալու է ուղեթերթ, ստորագրված, բացի աշխատավարի (նարյադչիկ), նաև այն անձի ձեռքով, որը պատասխանատու է տրանսպորտի տեխնիկական կանոնավոր սարքի համար։

33. Մեքենական տրանսպորտի ամեն մի կառքն ունենալու է ազդանշանային սարք, պարզ ու լսելի ձայնով ազդանշան տալու համար։

Արգելվում է ոգտվել այն ազդանշաններով, որոնք վերապահված են բժշկական ու տեխնիկական շտապ ոգնության, նաև միլիցիական ու հրշեջ ավտոմոբիլներին։

34. Լուսատու թանթները ճանապարհին փչանալու դեպքում, մեքենական տրանսպորտավարը պարտավոր է նրանց կարգի բերելու միջոցներ ձեռնարկել։ Եթե կարգի բերելն անհնար է, նա պարտավոր է անմիջապես գարաժ վերադառնալ՝ մեկ ժամում 15 կիլոմետրից վոչ ավելի արագությամբ։

35. Բոլոր ավտոմոբիլներն ու բեռնատար մեքենաները պետք է ունենան լավ արտացոլող գործիքներ (հայելիներ)։

36 Քաղաքում մեքենական տրանսպորտային կառքերով փորձնական թերթի վարժություններ թույլատրվում են միայն այն դեպքերում, երբ վարժվողի մոտը կա հրահանգիչ, որը ունենալու է հատուկ հավատագիր Բ. Գ. Միլիցիայի վարչության մեջ հաշվառքի նշանով։

37. Վարժության մեքենան անպայման ունենալու է լրացուցիչ պեդալներ (շղթաձիգ արգելակներ)։

Խորտակման կամ փողոցային շարժման կանոնները խախտելու դեպքում պատասխանատու է հրահանգիչը։

38. Դիմացի հանդիպումների ժամանակ իրար ճանապարհ տալիս՝ մեքենավարները պետք է մեծ լապտերների լույսը սպիտակ լույսի (ստորաֆարկ, փոքր լապտերի) փոխեն կամ բոլորովին հանգցնեն, նախապես ազդանշան տալով։

39. Հաշվառման թիթեղներ չունեցող ավտոմոբիլների ու մոտոցիկլետների փորձնական քննությունը կարող է կատարվել հատուկ թիթեղներով, որոնք տրվում են 3 որից վոչ ավելի ժամանակով։

40. Փորձնական քննության համար թիթեղներն ամրացվում են նույն տեղը, ուր սովորաբար փակցվում են հաշվառման թիթեղները։

41. Արգելվում է փորձնական քննություններ կատարել փողոցներում։ Փորձաքննության համար քաղաքից դուրս գնալիս՝ պետք է անցնել սակավատարդ փողոցներով։

42. Մարդատար մեքենաների արագությունը սահմանում են Բ. Գ. Միլիցիայի տեղական մարմինները և հաստատում են գործկոմների (քաղխորհուրդների) նախագահությունները։

Մարդատար ավտոմոբիլների ու մոտոցիկլետների առավելագույն արագությունը քաղաքներում և բնակավայրերում չպետք է անցնի 30 կիլոմետրից մեկ ժամում ցերեկը և 20 կիլոմետրից մեկ ժամում մութն ընկնելուց հետո։

Մարդատար ավտոմոբիլներին ու մոտոցիկլետներին թույլատրվում է վերոհիշյալ արագությունից ավելի բարձր արագությամբ գնալ, բայց ժամը 40 կիլոմետրից վոչ ավելի, լեթե ճանապարհը բաց է ու լերթևեկությունից ազատ։

Խաչաձևումներում և շրջադարձներում արագությունը սահմանվում է համաձայն ցուցադրված նշանների։

43. Մարդատար մեքենան ունենալու լե լերկու համարանիշ. մեկը՝ փակցրած առջևից բադիատորի տակ, իսկ մյուսը՝ լետևից կառքի կողին կամ առանձին ձողի վրա 0,5 մետրից վոչ ցածր գետնի մակարդակից։

Համարանիշները միշտ սարքին ու մաքուր պետք է լինեն։

44. ԽՍՀՄ ժամանող ոտարերկրյա ավտոմոբիլները, համաձայն 1926 թ. միջազգային ավտոմոբիլային կոնֆերենցիայում ընդունված կանոնների, պահպանում են իրենց լերկրներում ընդունված նշանները. բացի այդ՝ նրանք ունենալու լեն նաև լուրաքանչյուր պետության համար սահմանված ձվածիր ձևի առանձին տարբերիչ նշան։

Քաղաք լեկած այդպիսի ավտոմոբիլների մասին Ուդորտրանսի մարմինները պարտավոր են հաղորդել Բ. Գ. Միլիցիայի տեղական վարչություններին։

45. Մթնելիս, նաև թանձր մառախուղին՝ մարդատար մեքենան ունենալու լե անգույն ապակով լերկու վառ լապտեր, 20 մոմից վոչ ավելի լույսի ուժով, նաև պետք է ունենա լետևում, ձախ կողմից, մեկ լապտեր, վորը միաժամանակ անգույն ապակով լավ լուսավորի համարանիշը, իսկ գունավոր ապակով կարմիր լուսարձակի լետևը։

46. Արգելվում է քաղաքի սահմաններում գործածել շլացուցիչ նաև ճարողակ լույս։

47. Վերոհիշյալ լետևի լապտերը պետք է այնպես լուսավորի համարանիշ թիթեղը, վոր պարզորոշ լերևան բոլոր թվական և այլ նշանները և բացի այդ միաժամանակ պետք է ունենա նախազգուշացնող կարմիր լույս։

568855-6

ՊԵՏ ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ZUUՈ-Арм ССР

48. Ավտոմոբիլային ծածկած կառքի ներսն անպայման պետք է լուսավորել մութն ընկնելուն պես։

49. Արգելվում է մեքենավարներին ավտոմոբիլն առանց հսկողության թողնել —

ա. Զառիվայրերում։

բ. Ցերթևեկության նեղված տեղերում։

գ. Այն տեղերում, որոնք նշված են Բ. Գ. Միլիցիայի մարմինների կազմած և համապատասխան գործկոմների (խորհուրդների) որոշումներով հաստատված ցուցակներում։

Փողոցում թողնված մեքենան արգելակված պիտի լինի ձեռնարգելակով և շարժիչը պետք է փակված լինի։

50. Ագատ ընթացող կամ վարձողներ սպասող տաքսա-մոտորը կառքի աջ առաջակողմում ունենալու է ցուցանիշ «Ազատ» խորագրով։

51. Այդպիսի տակսա-մոտորները պարտավոր են անհապաղ կանգ առնել վարձվելու համար՝ ուղևորների առաջին պահանջով (ձեռքի բարձրացումով)։

52. Կանչված տակսա-մոտորի վարողն իրավունք չունի հրաժարվել գնալու առաջարկված ուղղությամբ կամ հեռավորությամբ քաղաքի սահմաններում։

53. Տակսաչափերը պետք է ամրացված լինեն կառքին այնպես, որ թվացույցը (ցիֆերբլատ) դարձված լինի ուղևորի կողմը։ Մութն ընկնելիս՝ թվացույցը լուսավորված պետք է լինի։

ՄՈՏՈՑԻԿԼԵՏՆԵՐ

54. Մոտոցիկլետների համար նույն արագության չափն է սահմանվում, ինչ որ մարդատար մեքենաների համար (կետ 42)։

55. Մոտոցիկլետ համարանիշ մեկ թիթեղը (յերկկողմանի) փակցվում է առջևի վահանիկի կատարին, թվանշանները շարժման կողմը դարձրած, վահանիկ չեղած դեպքում այդ թիթեղն ամրացվում է այլ ձևով ուղղահայաց դիրքում։ Մյուս թիթեղը փակցվում է յետևի վահանիկի ծայրին՝ թվանշանները շարժման հակառակ կողմը դարձրած։

56. Մոտոցիկլետն ունենալու է առջևի ու յետևի լապտերներ, որոնք վառվում են մթնելիս ու թանձր մառախուղին։

Լույսի ուժը նույնն է ինչ որ մարդատար ավտոմոբիլներինը։

57. Սայլակավոր մոտոցիկլետներին թույլատրվում է ընթանալ տրամվայի ռելսներով, բացի սլաքից։

58. Քաղաքներում և բնակված վայրերում յերթևեկելիս՝ ապրանքատար ավտոների (պեհվ-մասիկներով) արագությունը չպետք է անցնի 25 կիլոմետրից մեկ ժամում, իսկ բեռնատար մեքենայի շին ունեցողներինը՝ 15 կիլոմետրից։

59. Բեռնատար ավտոմոբիլը պետք է ունենա —

ա. Յերկու համարանիշ. մեկը՝ փակցրած է լինելու առջևից բաղիատորի տակ և մյուսը՝ յետևից կառքի կողին կամ առանձին կողի վրա 0,5 մետրից վոչ ցածր գետնից.

բ. Գարաժի համարակալման նշանը.

գ. Հիմարկի անունը, վորին պատկանում է մեքենան.

դ. Բեռնատարության քանակի ցուցմունքը.

յե. Լուսավորություն մթնելիս ու թանձր մառախուղին՝ 45-րդ կետում հիշված կարգով։

60 Բեռնատար ավտոմոբիլի գարաժահամարը պետք է նշանակված լինի բոլոր կողերի վրա, յետին կողի վրա համարը նշվում է թե դրսից և թե ներսից։

61. Արգելվում է յերթևեկել տրամվայի ռելսով, բացառությամբ նեղ փողոցների, ուր տրամվայի ռելսներով թույլատրվում է ընթանալ միայն ձախ անիվով։

62. Այն փողոցներն ու անցքերը, վորով բեռնատար ավտոմոբիլների յերթևեկությունն արգելվում է բոլորովին կամ որվա վորոշ ժամերին, նշվում են գործկոմների (խորհուրդների) պարտադիր վորոշումով ըստ Բ. Գ. Միլիցիայի Վարչության առաջադրության։

63. Յեթե բեռնատար մեքենային անհրաժեշտ է մոտենալ այնպիսի փողոցում գտնվող տանը, ուր բեռնատար շարժումն արգելված է, ապա մուտքը կատարվում է մոտակա փողոցից կամ նրբափողոցից։

64. Բեռնատար ավտոների բեռնվածության բարձրությունը չպետք է լինի չորս մետրից ավելի ճանապարհի հատակից։ Բեռան կախված մասի ամենաշատ յերկարությունն, ավտոմոբիլի յերկարությամբ, չպետք է լինի յերկու մետրից ավելի և չպետք է քսվի փողոցի սալահատակին։ Բեռնվածության ամենամեծ լայնությունը 2,5 մետրից ավելի անթույլատրելի է։

65. Արգելվում է մեծ շարժում ունեցող փողոցներում բեռնումն ու բեռնաթափումն. այդ կատարվում է բացառապես բակերում կամ կից նրբափողոցներում։

66. Կցված կառք ունեցող քարշակներն ու բեռնակիր ավտոմոբիլները փողոցներում յերթևեկելիս՝ յուրաքանչյուր կցված կառքն ունենալու

յե արգելակ, վորով ապահովվի նրա կանգառումն ամենամեծ զառիվայրերում։

Կցված կառքն ունենալու յե իր առանձին համարանիշը և իր քարշակի համարը։

67. Կցված կառքի բեռնվածությունը չպետք ե գերազանցի քարշակի կամ բեռնատար մեքենայի բեռնատարողությանը։

ԲՈՒԿՍԻՐՈՒՄՆ

68. Թույլատրվում ե բուկսիրել, հետևյալ պահանջները կատարելով.

ա. Բուկսիրման ընդհանուր յերկարությունը 14 մետրից ավելի չպետք ե լինի.

բ. Միացնող ողակը 6 մետրից ավելի չպետք ե լինի, ընդվորում միանգամայն ապահոված պետք ե լինի միացման կապի ամրությունն.

գ. Միացնող ողակը պետք ե լավ տեսանելի լինի, վորի համար ողակը պետք ե նշանել ծղոտե փնջերով, լաթերով և այլն, իսկ մութ ժամանակ լուսավորել.

դ. Բուկսիրվող կառքը, նմանապես քարշողն ունենալու յեն առջևից ու յետևից համապատասխան լուսավորություն.

յե. Բուկսիրվող կառքն ունենալու յե առանձին վարող՝ արգելակն ու ղեկը սպասարկելու համար.

զ. Բուկսիրման ընթացքում արագությունն մեկ ժամում 15 կիլոմետրից ավելի չպետք ե լինի։

ը. Բուկսիրման միջոցին վարողը խուսափելու յե տրամվայի յերթևեկող փողոցներից և ձեռք ե առնելու նախազգուշության բոլոր միջոցները։

ԱՎՏՈԲՈՒՄՆԵՐ

69. Ուղևորներ նստեցնելու և իջեցնելու նպատակով իրենց կանգառման կետերին մոտենալիս՝ ավտոբուսները կանգնելու յե մայթերի մոտ կամ հատկապես նշանակված տեղերում մեկ շարքով։ Մեքենան իր կանգառման տեղից կարող ե շարժվել միայն ուղևորների նիստն ու եջը վերջանալուց հետո։

70. Ավտոբուսները պարտադիր պետք ե դադար առնեն իրենց բոլոր կանգառման կետերում։ Ավտոբուսների շարժման ուղղությունները (մարշրուտ), նմանապես կանգառման տեղերը վորոշվում են Բ. Գ. Միլիցիայի համապատասխան վարչությունների համաձայնությամբ։

III ՀԱՏՎԱԾ

ՍԱՅԼԱ-ՁԻՈՒ ՏՐԱՆՍՊՈՐՏ

71. Ձիակառքեր վարել թույլատրվում ե քշելու իրավունք ունեցող 18 տարեկանից վոչ պակաս անձերին։

72. Արգելվում է—

ա. Ցերթևեկել անվարժ, հիվանդ, անսանձ, չնալված, չմաքրված, նայև չար, առանց դնչակալի՝ ձիերով և այլ լծկան կենդանիներով.

բ. Ընթանալ տրամվայի գծերով, բացի այն դեպքերից, երբ այլապես անցնելու հնարավորություն չկա.

գ. Անցնել տրամվայի գծի լայնությամբ վագոնը մոտենալիս, եթե վերջինս այնպիսի հեռավորության վրա է, որ հնարավոր չէ ժամանակին կտրել-անցնել.

դ. Թողնել առանց հսկողության ձիերն և մյուս լծկան կենդանիները.

ե. Լծկան կենդանիներին կապել կառքերին, լապտերների սյուներին, ցանկապատերին և այլն.

զ. Նրանց կանգնեցնել Բ. Գ. Միլիցիայի մարմինների կողմից վորոշված տեղերից դուրս։

ը. Կերակրել լծկան կենդանիներին փողոցներում առանց տոպրակների։

ՄԱՐԴԱՏԱՐ ՁԻԱԿԱՌՔԵՐ

73. Լծասարքն ու կառքերը միշտ պետք է կարգին լինեն։

74. Կառքերն ունենալու են զոգնոց, իսկ սահնակները ծածկոց։ Մարդատար կառքերն ունենալու են երկու համարանիշ մեկը՝ փակցրած

պետք է լինի կառապանի ձախ կողմը, իսկ մյուսը՝ կառքի հետևը։ Համարանիշները լինելու են միշտ մաքուր ու կարգին։

75. Մարդատար կառապանները պետք է մաքուր հագնված լինեն։

76. Արգելվում է կառապաններին շարժման միջոցին նստել ուղևորների տեղում։

77. Այն փողոցների ցանկը, ուր կառապաններին արգելվում է կանգ ունենալ վարձվելու համար և դատարկ գնալ, սահմանվում է գործկոմի (խորհրդի) պարտադիր վորոշումներով ըստ Բ. Գ. Միլիցիայի վարչությունների առաջարկության։

78. Մարդատար կառքերի շարժումը փողոցներով թույլատրվում է չափավոր արագությամբ և մայթին մոտիկ։ Այն կամուրջների ցանկը, վորոնց վրա շարժումը տեղի է ունենում միմիայն դանդաղ քայլով, սահմանվում է գործկոմների (քաղխորհուրդների) պարտադիր վորոշումով։ այդպիսի կամուրջների վրա ամրացվում են համապատասխան ցուցանիշներ։

79. Արգելվում է կառքի տեղերի քանակից ավելի նստողներ վերցնել, նայև կառքի լայնքից ավելի բեռ տանել։

ԲԵՌՆԱՏԱՐ ՁԻԱԿԱՌՔԵՐ

80. Բեռնատար ձիակառքերն ունենալու յեն համարանիշ՝ փակցրած լծաղեղի ձախ կողմն աչքի ընկնող տեղում. Համարանիշը պետք է միշտ մաքուր ու սարքին լինի։

Համարանիշը թոկերով կամ յերասանակներով փաթաթել անթույլատրելի յե։

81. Բեռնատար կառապանները պարտավոր են—

ա. Ունենալ ներկած լծաղեղ, որի առաջակողմը գրված է լինելու հիմնարկի անունը կամ տիրոջ ազգանունն, իսկ հակառակ կողմը՝ լրիվ հասցեն.

Լծաղեղ չեղած դեպքում այդ պետք է գրել մետաղե փոքրիկ տախտակի վրա, որը պետք է փակցնել դրսից սայլի ձախ կողին.

բ. Ունենալ համարանիշ թիթեղ, փակցրած լծաղեղի ձախ կողմը, լետևից, իսկ լծաղեղ չեղած դեպքում՝ խամուտի ձախ կողմը։

գ. Քշելիս՝ ընթանալ մի շարքով, մալթին մոտիկ, ազատ թողնելով իր ձախ կողմն առաջ անցնողի համար։

դ. Գնալ համաքալ թե բեռնած և թե դատարկ ժամանակ։

82. Արգելվում է կապել յետևից գնացող լծկանները առջևի կառքերին։ Կառապանը քայլելիս պետք է հետևի աջ կողմից. արգելվում է նրան մալթով գնալ։

83. Յուրաքանչյուր բեռնատար ձիակառքն ունենալու յե մի կառապան, որը պարտավոր է յերասանակները ձեռքին ունենալ կամ կենդանուն տանել սանձից բռնած։

84. Փողոցներով ու կամուրջներով բեռնատար ձիակառքն ընթանում է բացառապես համրաքայլ և մի շարքով։

Գումակի շարժման ժամանակ սայլերի միջև լինելու յե մեկ մետր ազատ տարածություն. իսկ յուրաքանչյուր 3 սայլից հետո պետք է լինի միջանցք ազատ անցուդարձի համար։ Այդ ազատ տարածություններն ու միջանցքները պետք է պահվեն նայև գումակի կանգառման ժամանակ։

85. Յուրաքանչյուր սայլի բեռնավորումը համապատասխանելու յե կենդանիների ուժին և ճանապարհների դրությանը. յեթե ճանապարհին կենդանին անկարող լինի բեռը տանել, կառապանը պարտավոր է միջոցներ ձեռք առնել սայլը թեթևացնելու։

86. Արգելվում է կենդանիների ընթացքն արագացնելու համար տանջող ու խեղող միջոցներ գործադրել կամ նրանց հետ դաժան վարվել։

87. Մեծածավալ իրերի, այն է ռելսերի,

տակառների, գերանների, տախտակների տեղափոխությունը կատարվելու է բաց սայլերով։ Բեռը պետք է այնպես դարսվի ու կապվի, որ դուրս չցցվի կողքերից, գետնին չքսվի, աղմուկ ու դղրդոց չհարուցի և 3 մետրից բարձր չլինի (սալահատակից չհաշվելով)։

88. Զառիվայրից իջնելիս և այլ անհրաժեշտ դեպքերում սայլերը պետք է արգելակվեն։ Առանց շնոցի ձի քշելն արգելվում է։

89. Այն փողոցների ցանկը, ուր բեռնատար ձիակառքերով լերթևեկելն արգելվում է իսպառ կամ որվա որոշ ժամերին, սահմանվում է գործկոմների (խորհուրդների) պարտադիր որոշումներով ըստ Բ. Գ. Միլիցիայի Վարչության առաջադրության։

90. Մերձքաղաքային գյուղերի բնակչությունը, որ բեռնատար սայլապանությամբ է պարապում քաղաքներում, լենթակա է ձիատրանսպորտի մասին սահմանված բոլոր կանոններին։

ԱԽՏԱՏԱՐ ԴՈՒՄԱԿ

91. Քաղաքի փողոցներով ախտատար գումակի շարժման ժամանակը սահմանվում է գործկոմի (խորհրդի) պարտադիր որոշումով՝ Բ. Գ. Միլիցիայի առաջադրությամբ։

92. Թուլատրվում է աղբ ու կեղտոտություններ դուրս տանելու համար հատկացված այն տակառների ու նման անոթների շարժումը քաղաքում, որոնք քննված են հատուկ հանձնաժողովի կողմից և ունեն իրենց համարանիշները, փակցված անոթի յետևը։

Արգելվում է անսարք, ծորացող ու կեղտոտված անոթներով աշխատանքի դուրս գալ։

93. Աղբ ու կեղտոտություն դուրս տանելիս՝ գումակները պետք է ընթանան հանդարտ քայլով ու առանց կանգ առնելու։

ԲԱՑԱՌԻԿ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐ

94. Մեծ փայտեղեն բեռների կամ անբաժանելի բեռների փոխադրությունը, որոնք իրենց ծավալով ու ծանրությամբ գերազանցում են սահմանված չափերից կամ 3 կենդանուց ավելի լուծ են պահանջում, այլ և այն դեպքերը, երբ փոխադրությունը կարող է խանգարել փողոցային շարժման կարգն ու անվտանգությունն, համարվում են բացառիկ փոխադրումներ և ամեն անգամ պահանջվում են Բ. Գ. Միլիցիայի Վարչության հատուկ թույլտվությունը։

ՓՈՇԻ ԱՌԱՋԱՑՆՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ՓՈԽԱԴՐՈՒՄԸ

95. Աղբը, շինարարական թափվող նյութերը և փոշի առաջացնող այլ նյութերը, որոնք

փոխադրվում են առանց անոթի (տարա) պետք է ծածկված լինեն բրեզենտով, խսիրով (ճիլոպ) կամ վորևե այլ լիաչափ ծածկոցով։

ՎՏԱՆԳԱՎՈՐ ՆՅՈՒԹԵՐԻ ՓՈԽԱԴՐՈՒՄԸ

96. Հանքային թթվուտների, բռնկվող ուտիչ հեղուկների և այլ ջնասակար նյութերի փոխադրությունը կատարվում է հետևյալ պայմաններում՝

ա. Կառքերը ռեսորներով են լինելու։

բ. Անոթները պետք է լավ փակված լինեն, չծորան, կառքի հարվածներից չխռնվեն։

գ. Յեթե հեղուկը կամ ջնասակար նյութը ճանապարհին թափվում կամ հետք է թողնում, կառապանն անմիջապես կանգ է առնելու, պետք է զգուշացնի շրջապատողներին սպառնող վտանգի մասին, վարակված տեղի վրա ավազ, հող և այլ նման նյութեր ցանի։ Միաժամանակ տեղի ունեցածի մասին նա անհապաղ հայտնում է մոտակա միլիցիական պահակին և առանց սրա թույլտվության իրավունք չունի շարունակելու ճանապարհը։

Դյուրին բռնկվող և պայթուցիկ նյութերի փոխադրության միջոցին, բացի վերոհիշյալ կարգից, պետք է ղեկավարվել նաև այդ մասին սահմանված հատուկ կանոններով։

ԲԵՌ ԴԱՐՍԵԼԸ

97. Բեռը պետք է դարսել ու ամրացնել տրանսպորտի վրա այնպես, վոր նա շարժվելիս՝ տեղահան չլինի, չընկնի, փողոցը չկեղտոտի և աղմուկ չհանի։

98. Արգելվում է բեռը գետնով քարշ տալ։ Յերկարուկ նյութերի, այն է՝ գերանների, տախտակների, յերկաթների և այլի փոխադրությունը պետք է կատարել յերկարավուն սայլերով կամ չորս անիվներով կամ սահնակներով։

IV ՀԱՏՎԱԾ

ՀԵԾԱՆԻՎՆԵՐԻ ՇԱՐԺՈՒՄՆ

99. Քաղաքում հեծանիվով (վելոսիպեդ) շրջել թույլատրվում է 12 տարեկանից վոչ պակաս անձերին, վորոնք վարժ են դրանում և ունեն պատշաճ համարանիշներ։

Համարանիշը փակցվում է հեծանիվի հետևը տպակու տակ։

100. Յուրաքանչյուր հեծանիվ ունենալու յե արգելակային սարք, զանգակ կամ աղդափող, իսկ մութն ընկնելիս՝ վառ լապտեր։

101. Արգելվում է—

ա. Յերթը մայթերով, զբոսավայրերի և պուրակների ճեմելիքներով։

բ. Ցերթը առանց ղեկը բռնելու.

գ. Ցերթը տրամվայի վագոնից, ավտոմոբիլներից ու կառքերից կառչելով.

դ. Ցերթը մեկ տեղանի հեծանիվի վրա յերկուսով կամ յերեխաներով,

յե. Ցերթը տրամվայի գծերի միջոցով։

102. Խմբական յերթի միջոցին հեծանիվները պետք է գնան իրար յետևից, առնվազն 3 մետր հեռավորությամբ։

103. Բազմամարդ և շատ կառքեր վխտող տեղերում հեծանիվավորները պետք է իջնեն և ձեռքով քաշեն հեծանիվը.

104. Հեծանիվների յերթևեկությունը վորոշ փողոցներում կարող է բոլորովին արգելվել. այդպիսի փոխոցների ցանկը սահմանվում է գործկոմների (խորհուրդների) պարտադիր վորոշումներով՝ համաձայն Բ. Գ. Միլիցիայի վարչության առաջադրության։

V ՀԱՏՎԱԾ

ՌԵԼՍԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏ (տրամվայ)

105. Տրամվայի վագոններ վարելը թույլատրվում է 20 տարեկանից վոչ պակաս անձերին, վորոնք հաշվառքի յեն Բ. Գ. Միլիցիայի մարմիններում և վագոնավարության իրավունքի պատշաճ վկայական ունեն։

106. Վագոնավարին յերթի ժամանակ արգելվում է—

ա. Խոսել.

բ. Ուտել

գ. Հեռացնել ձեռքը հսկիչի մեծ կոթից և ոդային արգելակից.

Վայրեջքներում և խաչաձևման կետերում վագոնավարը պետք է աշխատի կանգնած։

107. Արգելվում է շարժման դնել տրամվայի վագոնները—

ա. Անկանոն արգելակներով, ավազամաններով և նախազգուշական ցանցերով.

բ. Անսարք հսկիչով կամ մոտորով.

գ. Առանց ձայնական ազդանշանի.

108 Վագոնավարը պարտավոր է նախապես ազդանշան տալ—

ա. Շարժվելուց առաջ.

բ. Փողոցը լայնությամբ կտրելիս.

գ. Շրջադարձներում.

դ. Բազմամարդ տեղերում.

յե. Ռելսերի վրայով անցնող տրանսպորտին և մարդկանց։

109. Վագոնավարը պարտավոր է դանդաղեցնել վագոնի ընթացքը կամ կանգնեցնել—

ա. Զորամասեր, ցուցեր, բանտարկյալների խմբեր, կազմակերպված յերթեր անցնելիս.

բ. Շրջադարձներում, պտուտներում, սլաքատեղերում և գծերի խաչաձևումներում.

գ. Զառիվայրերից իջնելիս։

110. Տրամվայի վագոնի կոնդուկտորը պարտավոր է շարժվելու ազդանշան տալ միայն այն ժամանակ, երբ ուղևորների նստելն ու իջնելը վերջացել է և երբ վագոնի աստիճանների վրա մարդ չկա։

111. Վագոնավարը պարտավոր է վագոնը կանգնեցնել ըստ պահանջի կոնդուկտորի, վերահսկիչի (կանտրոլյոր), ի. Գ. Միլիցիայի պաշտոնատար անձերի, ընդ որում կանգնեցրած վագոնը չպիտի խափանի մարդկանց և այլ տրանսպորտի շարժումը։

112. Մութն ընկնելիս և թանձր մառախուղին տրամվայի վագոնի առջևի լապտերները վառ են լինելու։

113. Կայանակետերում և հարկադիր կանգառումներում վագոնավարը պարտավոր է այնպես կանգնեցնել վագոնը, որ չխանգարի հետիոտներին ու տրանսպորտներին փողոցը լայնությամբ կտրելու։

114. Արգելվում է քաղաքացիներին կառչել վագոններին, կախվել աստիճաններից, լել և մուտ անել շարժման միջոցին, դուրս գալ լետեվի դռնով։

115. Մոտորային վագոնի առջևի սրահակում կանգնողների թիվը սահմանվում է տեղական գործկոմների կամ խորհուրդների պարտադիր վորոշումներով։

VI. ՀԱՏՎԱԾ

ՀԵՏԻՈՏՆԵՐԻ ՇԱՐԺՈՒՄՆ

116. Վոտով յերթևեկումը կատարվում է մայթերով, խաչաձևման ուղիներով, զբոսավայրերով և առանձին ցուցանիշ կրող ճանապարհներով։

117. Հետիոտ յերթևեկողները պարտավոր են—

ա. Մայթով գնալիս՝ աջ կողմը բռնել շարժման ուղղությամբ.

բ. Կանգ չառնել այնտեղ, ուր այդ կանգառումն խանգարում է շարժմանը.

գ. Զնավաքվել խմբերի, վորոնք խանգարում են շարժմանը.

դ. Փողոցի հակառակ կողմն անցնել միայն խաչաձևման տեղերում ուղիղ, բայց վոչ շեղ ճանապարհով, փողոցների ու նրբափողոցների գծով, նաև առանձին ցուցանիշներ կրող տեղերով, միշտ ուշադրություն դարձնելով նախազգուշական ազդանշաններին.

յե. Չերթալ սալահատակի վրայով փողոցի յերկարությամբ.

զ. Չերթալ հեծանիվներին հատկացված ուղիներով.

ը. Տրամվայի վագոնին կամ ավտոբուսին սպասելիս՝ կանգնել միայն ուղեվորական հրապարակների կամ մայթերի վրա, յեթե չկան այդպիսի հրապարակներ.

թ. Մեծածավալ կամ կեղտոտ առարկաներ տեղափոխելիս, այլ և սայլակներ ու փոքրիկ սահնակներ քաշելիս, բացի մանկական սայլակներից, վորոնց մեջ յերեխաներ կան, նաև հեծանիվներ տանելիս՝ գնալ փողոցի սալահատակով մայթին կից.

ժ. Կապած շների հետ գնացող հետիոտները պետք է տանեն շունը կարճ պարանով անմիջորեն իրենց քովը.

118. Արգելվում է—

ա. Փողոցում ամեն տեսակ խաղ սարքել, սահնակներով, դահուկներով ու սղաններով սահել, բաց հալելիներ տեղափոխել.

բ. Յերեխաներին առանց հսկողության թողնել փողոցներում, մանավանդ տրամվայի գծերի մոտ.

գ. Տնատերերին՝ փակել մայթերը, բացի այն դեպքերից, յերբ անհրաժեշտ է նորոգություն կատարել կամ անցորդներին ապահովել վորևե վտանգից այս դեպքում պետք է շինվեն մայթին փոխարինող ապաստարաններ։

VII. ՀԱՏՎԱԾ

ՓՈՂՈՑԱՅԻՆ ԱՌՑԵՎՏՈՒՐ

119. Փողոցային առևտուրը կրպակներում և կիոսկներում, նաև ձեռքի ու ձեռնասայլակների վրա թույլատրվում է այդ նպատակին հատկացրած տեղերում։

120. Առևտրի համար տեղերը հատկացնում են քաղաքային կոմունալ տնտեսություններն, ամեն անգամ համաձայնության գալով Բ. Գ. Միլիցիայի Վարչության հետ։

121. Արգելվում է ինքնակամ տեղափոխել կառուցվածքները կամ մեծացնել զբաղեցրած տարածության չափերը։

122. Արգելվում է ձեռքի վրա ու ձեռնասայլակներով առևտուր անողներին տպրանքը դարսել մայթերի, փողոցի սալահատակների վրա, դարպասների ու տների մուտքերի առաջ և այլն։

VIII. ՀԱՏՎԱԾ

ՓՈՂՈՑՆԵՐՈՒՄ ՀՈՂԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ՑԵՎ ԿԱՌՈՒՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼԸ

123. Քաղաքի փողոցներով տրանսպորտի ու հետիոտների լերթեվեկի համար համապատասխան պայմաններ ստեղծելու նպատակով՝ փողոցներում հողային աշխատանքներ կատարող փողոց դուրս լեկող շենքեր կառուցող ու վերանորոգող, նաև այլ շինարարական աշխատանքներ կատարող կազմակերպություններն ու անձերը պարտավոր են ճշտորեն պահպանել առողջապահական հսկողության ու տեխնիկական անվտանգության կանոնները։

124. Փողոցային սալահատակների քանդումը կատարվում է Բ. Գ. Միլիցիայի վարչությունների թույլատվությամբ։ Նոր շենքերի կառուցումը կատարվում է Բ. Գ. Միլիցիայի վարչություններ հետ համաձայնության դալուց հետո։

125. Բնակելի ու առևտրական շենքերի պատուհանների վրա հովանոցներ շինել, նաև մայթերի վրա դուրս լեկող ցուցանակներ կախել թույլատրվում է 2 մետրից վոչ ցածր՝ մայթի մակերևույթից։ Հովանոցներն ու ցուցանակները պետք է պինդ ամրացված լինեն և մայթի սահմանագծից չանցնեն դեպի փողոց։

126. Բոլոր ռեկլամային և այլ ցուցանակները կախել կարելի լե միմիայն Բ. Գ. Միլիցիայի վարչությունների համաձայնությամբ։

127. Արգելվում է մայթերի ու փողոցների սալահատակների վրա —

ա. Բեռներ ու տարաներ (անոթներ) դարսել՝ բեռնատար կառքերը բեռնաթափելիս կամ բեռնելիս։

բ. Փայտ սղոցել ու ջարդել և այլ նման գործողություններ, վորոնք ավերում են մայթերն ու խանգարում փողոցային շարժումը։

IX. ՀԱՏՎԱԾ

ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՇԱՐԺՈՒՄԸ ՔԱՂԱՔԻ ՓՈՂՈՑՆԵՐՈՎ

128. Թույլատրվում է անասուններ քշել քաղաքի այն փողոցներով, վորոնց ցանկը սահմանվում է գործկոմի (խորհուրդի) պարտադիր վորոշումներով։

Արգելվում է անասուններ քշել այն փողոցներով, վորոնցով տեղի լե ունենում տրամվայի շարժումը։

129. Արգելվում է անասուններ քշել 5 գլուխից ավելի խմբերով։

X. ՀԱՏՎԱԾ

ՑՈՒՅՑԵՐԻ ՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊ ՅԵՐԹԻ ՈՐԵՐԸ ՓՈՂՈՑԱՅԻՆ ՇԱՐԺՄԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆ

130. Փողոցային շարժման կարգն ապահովելու նպատակով ցույցեր ու յերթեր կազմակերպող հիմնարկներն ու կազմակերպությունները հրավիրում են Բ. Գ. Միլիցիայի մարմինների ներկայացուցիչներին՝ միասին կազմելու ցույցերն ու կազմակերպված յերթերն անցկացնելու ծրագիրը։

131. Շարքասուների անցքի ժամանակ շարժումն կարգավորողներն պարտավոր են—

ա. Չթույլատրել կողմնակի անձերին միանալ շարքասուներին.

բ. Չթույլատրել շարքասուների ճեղքվելը.

գ. Ճեղքվածքի դեպքում չթույլատրել անցորդների ու տրանսպորտների շարժումը շարքասուների ճեղքվածքի միջով.

դ. Չթույլատրել հանդիպակա շարքում շարքասուների ընթացքի ուղղությամբ.

յե. Հանգույցակետում միաժամանակ յերկու կամ ավելի շարքասուներ յերևալիս՝ միջոցներ ձեռնարկել պահպանելու շարժման կարգը, շարքասուների անցման հերթեր սահմանելով.

զ. Դժբախտությունների և հանկարծակի

հիվանդությունների դեպքերում տուժողներին ուղարկել շուտափութ ոգնության կետերը, վորոնց տեղը նրանք պետք է վաղորոք իմանան։

XI. ՀԱՏՎԱԾ

ՓՈՂՈՑԱՅԻՆ ՇԱՐԺՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

132. Այս կանոնների խախտման համար հանցավորները պատասխանության են յենթարկվում վարչական կարգով՝ համաձայն գործկոմների կամ խորհուրդների հրատարակած պարտադիր վորոշումների՝ դրամական տուգանքի մինչև 100 ռ. կամ հարկադիր աշխատանքների մինչև 1 ամիս. իսկ հարկ յեղած դեպքերում յենթակա յեն դատական պատասխանատվության։

ՈՏԱՐ ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

ՊոռՃիլ՝— Մարդու կամ առարկայի այնպիսի դիրքը, յերբ յերևում է նրա մեկ կողմը, կողքը, կամ կես դեմքը։

ԼյուՃս՝— Մեքենայի այն մասերը, վորոնք խախուտ դրության մեջ են, ժաժ են յեկել։

Խլացուցիչ՝— (глушитель)— արկղաձև սարք է վոր հարմարեցրած է ավտոմոբիլների այրվող գազերը դուրս տանող սորին խողովակի վրա, վորպեսզի խլացնի դուս յեկող գազի աղմուկն և վոչնչացնի ծուխը։

Բադիատոր՝— Ավտոմոբիլի առջևի մասում հարմարեցրած արկղային սարք է, վորտեղ գտնվում է մեքենան հովացնող ջուրը։

Թեվեր՝— Ավտոմեքենայի յերկու կողմերումն է գտնվում փոշուց և ցեխից պաշտպանելու համար։

Պոպելլեր՝— Ավտոմեքենայի առաջամասում խաչաձև թևերով պտտվող գործիք է վոր աշխատելիս՝ բադիատորի ներսն է քաշում դրսի հովացնող ողը։

Անկախ արգելակներ՝— ԽՍՀՄ գործող պարտադիր վորոշումների համաձայն, ամեն մի ավտոմեքենա ունենալու յե 3-ից վոչ պակաս անկախ արգելակներ, վորոնցից ամեն մեկը առանձին և մյուսից անկախ գործադրելիս այնքան ուժ ունենա, վոր կարողանա կանգնեցնել ավտոմեքենան։

Կուզով՝— Ռուսերեն բառ է, ավտոմեքենայի փորն է, այսինքն այն մասը, ուր տեղավորվում են նստողները կամ բեռները։

Հավասարակող յեռանկյունի՝— Յեռանկյունի նշան է թիթեղից, վոր դեռեղվում է ավտոմեքենայի հետին յերեսին և ներքին լուսավորության միջոցով ցույց է տալիս «կանգ առ» ազդանշան։

Գարաժ՝— Պահեստ, ուր գտնվում են ավտոմեքենաները։

Պեդալ՝— Հարմարեցրած սարք է, վորին վոտքով սեղմելով կարելի յե կանգնեցնել ավտոմեքենայի ընթացքը կամ անջատել մեքենայի աշխատանքը հետևի անիվներից։

Ֆարկ.— *Ավտոմեքենայի լապտեր. usnրաճարկ — մեքենայի առջևի 2 լապտերները, որոնք հարմարեցրած են առջևի 2 մեծ լապտերների տակը, ստորին մասում։*

Ֆարրդալ լույս.— *Ֆարրա լեն կոչվում ավտոմեքենայի 2 մեծ լապտերներն առջևվում, որոնք շլացուցիչ լույս են արձակում և վառվում են քաղաքի սահմաններից դուրս լերթևվեկելիս։*

Տակսա-մոտոր.— *Են կոչվում այն մեքենաները, որոնք հարմարեցրած ունեն հատուկ գործիք, հաշվիչ, որը ցույց է տալիս անցած կիլոմետրների քանակը և արժեքը։*

Պնեվմատիկ.— *Միջուկն ոդով լցված բեռինե շին է, որ տարբերվում է միապաղաղ բեռինե շինից իր ճկունությամբ։ այս գործածվում է մեծ մասամբ մարդատար ավտոմեքենաների համար, սակավ դեպքերում նաև թեթև տպրանքատար ավտոների համար։*

ՑԱՆԿ

1. ՀԱՏՎԱԾ

Ընդհանուր կանոններ 3

2. ՀԱՏՎԱԾ

Տրանսպորտավարների պարտականություններն ու նրանց առաջադրվող պահանջները 11
Մեքենական տրանսպորտ 21
Մարդատար մեքենաներ 16
Մոտոցիկլետներ 19
Բեռնատար մեքենաներ 20
Բուկսիրումն 22
Ավտոբուսներ 23

3. ՀԱՏՎԱԾ

Սայլա-ձիու տրանսպորտ 23
Մարդատար ձիակառքեր 24
Բեռնատար ձիակառքեր 26
Ախտատար դումակներ 28
Բացառիկ փոխադրումներ 29
Փոշի առաջացնող նյութերի փոխադրումներ 29
Վտանգավոր նյութերի փոխադրումն . . . 30
Բեռ դասելը 13

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР

4. ՀԱՏՎԱԾ

Հեծանիվների շարժումն 31

5. ՀԱՏՎԱԾ

Ռելսային տրանսպորտ (տրամվա) 32

6. ՀԱՏՎԱԾ

Հետիոտների շարժումն 35

7. ՀԱՏՎԱԾ

Փողոցի առևտուր 37

8. ՀԱՏՎԱԾ

Փողոցներում հողային աշխատանքներ և կառուցումներ կատարելը 38

9. ՀԱՏՎԱԾ

Անասունների շարժումը քաղաքի փողոցներով 39

10. ՀԱՏՎԱԾ

Ցույցերի ու կազմակերպ յերթերի որերը փողոցային շարժման կարգավորումն 40

11. ՀԱՏՎԱԾ

Փողոցային շարժման կանոնների խախտման պատասխանատվությունը 41

«Ազգային գրադարան»
NL0290313

24.118

ԳԻՆՆԵԼԻՔ.

656
Ч-21